Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18508

ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

[illegible]

ՂԱԶԱԽԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՑԱՒԵՐԻՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

891,99
Ա-43

1907

821.89
Ա-43
19 AUG 2011
24 JAN 2006

ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԵՑԵՐ

ՂԱԶԱԽԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՑԱՒԵՐԻՑ

ՄԱՍ Ա. ԱՌԱՋԻՆ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ՊՕԼԻՑ. 7.
1907 (77)

18507
5.02.2013

Արտատպած «ԱՇԽԱՏԱՆՔ» շաբաթաթերթից

241
44

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԵՑԵՐ

I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Գանձակի նահանգում Ղազախ գաւառն՝ որքան մեծ ու ընդարձակ երկիր է, այնքան գիւղաշատ ու բազմամարդ, որքան դիրքով լեռնոտ ու անտառապատ, այնքան ազգաբնակութեամբ կոշտ ու անկիրթ։

Պատմական այդ Գուգարաց աշխարհն, որքան հընումն օրինակելի է եղել կեանքի արթնութեամբ, ինչքան նրա ազգաբնակութիւնը յառաջախաղաց դեր է կատարել հայ հասարակութեան խաւերում և ինչքան աչքի է ընկել իր կուլտուրական զարգացողութեամբ, այնքան այժմեան Ղազախը՝ յետ է մնացել ընթացիկ կեանքից և ժամանակակից արթնութիւնից։

Մօտ 200,000 բնակչութիւն ունեցող այդ գաւառը՝ շնորհիւ այն հանգամանքի, որ սկզբից ի վեր ապրել են թւով աւելի անկուլտուրական թուրքեր, հնարաւորութիւն չէ ունեցել զարգանալու և ընդհանուր բնակչութիւնը մնացել է խաւարի, տգիտութեան և նախնական թիւր սովորութիւնների մէջ ընկղմած։

Ամբողջ գաւառը բաժանուած է երեք խոշոր մասերի. առաջին Շամշադին, երկրորդ Ղազախի գաւառամաս և երրորդ մասը կարելի է ասել, կազմում է Ղազախ գիւղաքաղաքի շրջանը։ Թէ մէկ և թէ միւս բաժանմունքները համարեա թէ մէկս մէկուց ոչնչով չեն տար-

բերում։ Լեզուն, սովորութիւնները, բնակչութեան նիստ ու կացն, աշխարհահայեացքը, կրօնն ու դաւանանքն, երկու գաւառամասերումն էլ գրեթէ միևնոյնն է։ Իսկ գիւղաքաղաքի կեանքը՝ շնորհիւ արտաքին աշխարհի յարաբերութեան, փոքր ի շատէ կենդանութեան մէջ է։ Նա, երևի աւելի կառաջադիմէր, եթէ Կարս-Երևանեան երկաթուղու գիծը չշինուէր, որովհետև այն օրից սկսած, ընկաւ գիւղաքաղաքի թէ յաճախակի յարաբերութիւնը, թէ առևտրականութիւնը և թէ բնակչութեան աճումը։ Քանի չրկար այդ գիծը, զանազան տեղերից, Երևանեան նահանգի հետ յարաբերութիւն կատարում էր Աղստաֆա կայարանից Ղազախ գիւղաքաղաքի վրայով։ Ամենօրեայ երթևեկութիւնը շէնացնում, զարգացնում էր փոքրիկ գաւառական քաղաքն, իսկ այսօր, այդ ամենը մեծ մասամբ կատարւում է Կարսի գծով և Ղազախը՝ յետ է մնացել։

Մենք այժմ կըխօսենք Ղազախ գաւառամասի վերաբերմամբ, Շամշադինը թողնելով ապագային։

Ղազախ գաւառամասում ապրում են հայեր և թուրքեր, վերջինները թէ թւով շատ են և թէ գիւղերով։ Առհասարակ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Ղազախում, հայերը բնակւում են լեռների, բարձրունքների, լանջերի և սարահարթելի վերայ, իսկ թուրքերն աւելի դաշտավայրերի ու տափարակների վերայ։ Բնակութեան տեղի, դիրքի և կլիմայի համեմատ էլ կեանք են վարել տեղական հայ ու թուրք ժողովուրդները։

Լեռնոտ երկիրը բնակարար սրտոտ զաւակներ է շատացրել և ազդեցիկ բնութիւնը՝ կտրուկ իգիթներ։ Նրանք իրանց ժոր կաթի հետ ծծել են հայրենիքի սառնաշունչ օդը, կերած հացի հետ խմել են երկաթի ջուրն և քարքարոտ երկրի հետ, կոշտացել ու ամրացնդել։ Միակ հարստութիւնը Ղազախի կեանքում, այդ

կատարեալ առողջութիւնն է, որ աւելի քան վայելում է հայ ազգաբնակութիւնը գրեթէ բոլոր գիւղերում։

Հայաբնակ գիւղերի մէջ կան մեծ ու բազմամարդ և փոքրն ու սկաւամարդ գիւղեր. թէ առաջիններում և թէ վերջիններում՝ կեանքը լճացած է. ոչ մի նորութեան ներմուծում, ոչ մի առաջադէմ քայլ և ոչ մի ընդօրինակութիւն արտաքին աշխարհից՝ դեռ մուտք չէ գործել այդ կողմերում։ Ժողովուրդը սկզբից ի վեր շարունակել է իր նախնական կեանքն և այսօր էլ նոյն անշարժ վիճակի մէջ է։ Նա զբաղւում է առաւելապէս՝ հողագործութեամբ, ապա՝ անասնապահութեամբ, այգեգործութեամբ և մասամբ էլ մեղւարծութեամբ։ Այս ամենի վերաբերեալ՝ նրա գիւղատնտեսական հայեացքները նախնական են. աւանդաբար փոքրերը մեծերից սովորելով՝ և՛ մաճկալ են և այգեգործ, և՛ «չորան» են և ամեն բան. սակայն իսկապէս և ոչ մի գործում ու արհեստի մէջ օրինակելի։

Ի հարկէ այլապէս չէր էլ կարող լինել, որովհետև այդ ահագին գաւառում, դեռ չկայ ոչ մի դպրոցական հաստատութիւն, որտեղ փոքր ի շատ է զարգանար հայ ղազախեցին։ Ղազախում՝ գրեթէ չկայ կըրթած գործիչ՝ քահանայ, ուսուցիչ, գիւղատնտես և թէ առհասարակ օրինագէտ մարդ, եղածները մանկութիւնից հեռանալով իրանց հայրենիքից՝ մնացել են դուրսը։

Ղազախեցիների իրաւաբանական զարգացումը ժանաւանդ անկարագրելի է։ Մի գիւղական գլուխն կամ օգնական, մի շինական դատաւոր կամ սրօրշչիկ, մի կանցելյարիստ պիսեր, կամ գիւղի գրագիր, մի «օրէշչիկ» կամ «եասաւուլ», մի կալաճատէր կամ «աղայ» մի «հաքիմ» կամ «գրբաց», մի «փալչի» կամ «դէվրիշ» և վերջապէս մի դուքանչի, կամ հէնց նոյնիսկ մի մանրածախս չարչի՝ ամեն մէկը երևակայում է

իրեն իշխանաւոր և օրինական, և պահանջում է իր կամքի իրագործումը։ Էլ չենք խօսում քահանաների մասին։ Ժողովուրդն էլ հետևելով նախնեաց անցեալ օրինակներին՝ իր մեծարանքն ու յարգանքն է ցոյց տալիս իւրաքանչիւրին իր կոչման համապատասխան։ Իսկ ինչ վերաբերում է բարձրաստիճան պաշտօնեաների անսահման իշխանութիւնը՝ Ղազախեցին, հայ թէ թուրք, նրանց որսն են։

Պակաս գործ չեն տեսնում և պառաւ թուրք բաջիներն ու ժոլլաները։ Սրանք որքան յարգ ու պատիւ ունեն իրանց ցեղակիցների մէջ, այնքան էլ հայերի մօտ։ Նրանցից իւրաքանչիւրն՝ որպէս թէ շնորհուած են ամուրի կանանց որդեծնութեան կարողութեամբ և ահա, ամեն տեղ ներս ու դուրս անելով՝ պարազիտների նման ծծում են անմիտ ժողովրդի արիւնը։

Արքունի հարկից շատ աւելի գումար՝ Ղազախեցին տալիս է թէ ամեն մի վարչական պաշտօնեայի և թէ տեղական այսինչ և այն ինչ անհատին իր կարիքը կատարելու համար, սակայն փողը ձեռքիցը գնում է և ինքը դարձեալ մնում է ձեռնունայն և նոյն կարիքի մէջ։

Մենք, ընթերցողի առաջ, յաջորդաբար կը մերկացնենք այդ գիւղական ցեցերի մանրամասը գործունէութիւնը և շօշափելի օրինակներով կաշխատենք պատկերացնել ամենքին։

Այժմ կը խօսենք բոլոր վարչական պաշտօնեաների մասին և այս կլինի մեր խօսքի առաջին մասը, իսկ յետոյ-բոլոր կողմնակի հարստահարիչների մասին և այն կլինի մեր խօսքի երկրորդ մասը։

II

Գ Լ Ա Ի Ի Ն

«Գիւղական ցեցեր»-ի շրջանում՝ նախաթոռը պատկանում է գլաւինին։ Թէև գիւղացիներից ամենքը նրան ճանաչում են, որ նա գիւղ ու գեղամէջը քանդող, անճար աղքատի արիւ-քրտինքը ծծող, քեասիբ աշխատաւորի հալալ վաստակը կլանող և «հախ ու նահախ» տեղից «զօռդանզօռ» կաշառք ուտող մի պատուհաս է իրանց գլխին, սակայն նա իր պաշտօնավարութեան ամբողջ ընթացքում,՝ դարձեալ իր պատւի ու մեծարանքի տէրն է։ Նա, որպէս գիւղի տէր ու տիրական՝ համարւում է «քէդխուդա»-ների աւագ անդամ, ուստի և շինականի ամեն նիստ ու կացի ժամանակ՝ հարսանիքի, մահենիքի, կնքաւատէքի և ուրիշ հանդիսաւոր տօնախմբութիւնների «վերի թարէք»-ի, կամ «ճակատի» բարձը նրան է պատկանում։ Այս առաւելութիւնը յաջորդաբար նախորդից անցել է վերջինին, բայց որքան մօտեցել է մեր օրերին, այնքան ժողովրդի աչքում ընկել և թեթեւացել է։

Ղազախեցի ռամիկն, որքան և տխմար է, բայց և այնպէս իր հոգու ամբողջ կարողութեամբ ըմբռնում է՝ թէ գլաւինի և թէ առհասարակ գիւղի բոլոր պաշտօնեաների տիպը, «նրանց կաշին, ինչպէս ասում են, ճանաչում է նոյն իսկ տիկ հանած ժամանակ»։ Նա ձեռնահաս է իւրաքանչիւր խնդրում երևան հանելու նրանց քացասական կողմերը, բայց քանի որ գիտէ, թէ՝ իր բողոքի ձայնն ոտնատակ է լինելու և ինքը «զալժաղալչի» ու «փիսամարդի» է դառնալու անմիաբան գիւղի մէջ, մանաւանդ մեծամարդկանց աչքում՝ լռում

է ու կամա-ակամա հաշտւում է այդ անօրէն վիճակի հետ։

Այլապէս չէր էլ կարող անել նա, որովհետև Գլաւինն իր «արբանեակնիրի» հետ միասին, գրեթէ ամբողջ գիւղի համայնքին՝ մի այնպիսի ցանցապատի մէջ է շրջափակում, որից դուրս պրծնողն այլ ևս անկարող է հալալ «հաց ու ջրի» տէր մնալ։ Եւ այս իրականութիւնը թէ տարիներից առաջ էր տիրապետում մեր գիւղերում, թէ երեկ-մէկէլ օրն և թէ շատ տեղեր նոյնիսկ ներկայումս նոյնն է։

Տէր մի արասցէ, «վայն եկել ու տարել է նրան»՝ ով ծայրայեղ յուզմունքից ալեկոծւած, բռնկում է և դառն ճշմարտութիւններ արտայայտելով՝ ոտից-գլուխը ներկում է գլաւինին, կամ թէ «պաշտօնեայ մեծամեծներից» մէկն ու մէկին։ Այն ժամանակ ամեն բան վերջացած է այդօրինակ ճշմարտախօս «դալմաղալչու» վերաբերմամբ. գլաւինի «կոխեցէք հարամզադին» հրամանի համաձայն՝ այնքան «ջարդ ու փշուր» ծեծւում է, այնքան «արէն-լուիկ» վերք ու ուռուցք է ստանում, որ «հալ ու հարաքաթից» ընկնում, գրեթէ անշնչանում է։ Եւ երբ նոյն գլաւինի մեծ բարեխնամութեամբ արտասանած «բօլա» խօսքը վրայ է հասնում, այն ժամանակ միայն, աղեկտուր վայնասունից ձայնը կտրած և ոտք ու ձեռքից ընկած «մեղաւորին» բանտարկում են—ձգում են ծակը՝ «տուսաղխանէն»։

—Գնա, ինչ տեղ քունն ասես, իմն էլ ընդի սա, խրոխտանում է մեծամիտ գլաւինն անօգնական թշւառի յետևից։

—Էդ քեզ խրատ, էլ լը ցանես կուանատ, խրատում են առանձին հեգնութեամբ գլաւինի ախպերացեղ պաշտօնեին և մեծաւորները։

—Եանի ոտդ, որ եօրղանիդ գեօրայ մէկնես, ինչ

կլի. ցաւակցում են «դօստ» բարեկամները, իսկ «դուշման» հարևաններն՝ ատելութեան թոյնով լիքն ուրախանում են։

—Ա՜յ հախն ա, տուր, հլա քիչ կերաւ...

Եւ այս ու այս օրինակ բիւրաւոր իրարանցման դէպքերի և տխուր երևոյթների բուն պատճառը՝ հէնց ինքը գլաւինն է իր արբանիակներով և նա այդ բոլորը կատարում է որոշ նպատակով և որոշ ակնկալութեամբ։ Պարզենք մի քանի եղելութիւններ։

Ահա՝ համագիւղացի Պետոնի մի լուծ եզը կորել է, կամ Աթօի «մադիան» ձին՝ քուռակը հետը գողացել են, կամ Հանէսի գոմը գիշերով կտրել են և դուրս քշել նրա ունեցած բոլոր չորքոտանիներին և կամ մտել են դուքանչի Արտէմի ճօթի խանութը և ամբողջ ապրանքը մաքրազարդել։ Միւս օրը «գանգատ-գանգատաւորի» յետևից գալիս ու գնում են սելսկի ուպրաւլէնիէն և եղելութիւնը յայտնելով գլաւինին՝ ազի արտասունք են թափում, «խունջիկ-մունջիկ» գալի, մըխկոում և օգնութիւն խնդրում նրանից, համոզւած լինելով հանդերձ, որ նա կարող է ամեն բան անել...

—Ա՜Պետ, ա փլան, ա փստան, նէէ դաստին-դաստին ասում ու պահանջում էք, հլէի թէ ես եմ գողացել, եա տանողի տեղը գիդամ, որ կանչեմ ու «դախկար ջոխի» անեմ, յետ խլեմ ձեր ապրանքը...,

—Քեզ մատաղ, Գրիգոր քեօխվա, դու չես արել, հաժա դու շատ բան հսկացող մարդ ես, հինգ մատիդ հմբարքով ճնանչում ես մեր գեղերանքի գողերին... վերևն Աստած, ներքևը դու՝ մի ճար արա մեզ։

—Լաւ, լաւ, գնացէք։ Մի բան խոստանամ փլանքասի Վասլին, կարելի ա կորուստի «իզը» գթնի։

Եւ թալանւածները գնում են, լիայոյս լինելով, որ մի երկու օրից յետոյ կորուստը գտնելու է, բայց

այդ բոլորի փոխանակ ամեն մի ապրանքագլխին տալու են 10—15 ռուբլի փրկանք։

Այդ գումարն անցնում է գլաւինի ձեռքը և մըտնում է իր ու իր նմանների գրպանը։ Սա սովորական երևոյթներից է։

Պատահել է, որ Սաքոի գոմէշը Մադնի «զորուխն» արածել է, կամ քասիբ Զալոի էշը Մուկուչի արտնէ ընկել, կամ Ծէփկոի մերան խոզը Համբոի բաղնէ մտել և կամ Նեսոի ոչխարը Սողոմի լոբուտն է փչացրել։ Վնասուողը գնացել է գլաւինի մօտ՝ իր բաղուբղչի վնասները՝ մէկն երկուսով թւել ու արձանագրել է տւել և դատաստանը թողել նրա բարեհայեցողութեանը։ Ահա գլաւինը խիստ հրամանով, կանչել է տալիս անասունների տիրոջն և մի, կամ երկու օր ժամանակ տալով, պահանջում է այս ինչի, կամ այն ինչի վնասը յատուցանել։ Դու արի ու հազար ասա թէ՝ բոլորովին սուտ է յայտնուած, թէ ոչ մի բան չէ փչացրած և տուգանքը սաստիկ մեծ է ու եղելութիւնը սաստիկ չափազանցրած. ով է քեզ հաւատում։ Շատ շատ՝ քեօխվէն մարդիկ կուղարկի վնասը տեղն ու տեղը որոշելու և գնացողները շատ պարզ է, որ յաճախ իր արբանեակներից են լինում և եղելութիւնն աւելի մեծացնում են, քան օրինակ հէնց արտատէրի կամ բաղատէրի ու միւսների ասածը։ Տուգանքը տրւում է, «տուն աւած» չորքոտանիները բաց են թողնում և փողը փոխանակ վնասուողի ձեռքն անցնելը՝ մտնում է գլաւինի գրպանը։

Դիցուք, հարկաւոր գործով, մի գաւառական պաշտօնեայ եկաւ գիւղը, կամ գիւղից՝ որոշ պարտականութեան համար՝ այս ինչ ու այն ինչ մարդը կանչւեցան «ուեզդնոյէ ուպրաւլէնիէն». երկու դէպքումն էլ՝ եկողի ու գնացողների համար, գործադրած պատահական ծախսը՝ մի երկու օրից յետոյ ծաւալելով՝ դառնում է

մի պատկառելի գումար և բաժանւում է գիւղացոց վրայ ու հայդէ, մանէթներ է, որ գլորւում են դէպի կանցելարիէն՝ յօգուտ գլաւինի ու նրա թև ու թիկունք պաչօտնիկների։ Դէ, համարձակւիր ու մի վճարիր՝ իսկոյն «շանսաստակ» անելով քեզ տուսաղխանէն կը գցեն և իրանք անձամբ տնիցդ մի իրեղէն կը հանէն ու վաճառքի կը դնեն։

Ենթադրենք համագիւղացիներից մի երկու մարդու մէջ մի հին դաւ կայ։ Տարիների ընթացքում՝ մէկը կամ միւսը, նախապէս զանազան «փէշքաշներով» շահելով ժամանակակից տանուտիրոջ սիրտը, կամ մի որև է աչքի ընկնող յանձնարարութիւն կատարելով յօգուտ նրա՝ գործը տարել է։ Անցնում է մի քանի տարի, նորընտիր տանուտիրոջ առերես քաղցրութիւնից ուզում է օգտւել տանուլ տւող դատատէրը և ահա սա է սկսում իր բարեկամութիւնը նրա հետ։ Նւէրներ է ուղարկում, կաշառք է տալի և մի օր էլ յանկարծ տեսնում ես հին գործը «թազացաւ» ու այժմ վճռւեց յօգուտ առաջւան տանուլ տւողի։ Կռիւն ընկնում է դատատէրերի մէջ և մէջ տեղից նիւթականապէս օգտւում է դարձեալ գլաւինը։

Այդպիսի օրինակներ անթիւ են. պէտք է ապրել նրանց մէջ՝ աչքով տեսնել և ականջով իմանալ ամեն ինչ։

Ինչպէս ամբողջ Ղազախում, այնպէս էլ մեր երկրորդ գաւառամասում, գիւղական կառավարութիւնը զուտ համայնական էր։ Ամեն մի գիւղ ունէր իր առանձին սելսկիյ ստարշինան, օգնականն, երեք դատաւորներ, որոնք ներկայանում էին մի-մի թագաւորներ, կառավարում էին իրանց խելքի կտրածով։ 1903 թւից մեր կողմերում հաստատւեց վոլօստնոե ուպրաւլենիէ կոչւող գիւղերի կառավարչական ձևը։ Այդ օրից սկսած մի քանի գիւղեր կենդրոնանում են մի գիւղում։ Բոլորին հսկում է մի գլաւին և ստանում է տարեկան 300 ր.

ռոճիկ։ Նրա իրաւասութեան տակն են իր ձեռքում կենդրոնացած գիւղերի համար նշանակւած առանձին-առանձին օգնականներ։ Իւրաքանչիւր գիւղ ունի իր մէկ սուդան՝ դատաւորը։ Շաբաթը մէկ անգամ բոլոր գիւղերից՝ գործ ունեցողները հաւաքւում են սելսկոե ուպրաւլենիէն և այնտեղ է վճռւում նրանց գանգատը։ Փոքր գործերը վճռւում են հէնց իրանց տեղում՝ իրանց յատուկ պաշտօնեաների մէջ, իսկ մեծ գործերը անպայման անցնում են հաւաքւած օրինականների շրջանը։ Այսպէսով՝ ապակենդրօնացնումը խախտւեց մեր կողմը և նշանակւել է կենդրոնացումն։ Վարչական այս ձևը մեծ վնասներ է պատճառում ազգաբնակութեանը։ Նրանք տուժում են թէ բարոյապէս, թէ տնտեսապէս և թէ ֆիզիքապէս։

Սելսկի ուպրաւլենիի բոլոր պաշտօնեաներն ընտրւում են երեք տարի ժամանակամիջոցով։ Շատ դէպքում նրանք վերընտրւում են, որովհետև ներքին կապնրով միացած են ժողովրդի հետ։ Այս բոլորի գլուխ գործոցն է գլաւինը՝ բոլոր գիւղերում, նրա օգնականը՝ իր գիւղում և այնուհետև միւսները։ Գլաւինը գիւղերի համար արիւնռուշտ գազան է, այդ բանը գիտեն իրանից բարձր իշխանաւորները, սակայն նրանից որոշ չափով օգտւելով, միշտ լռութեամբ են վերաբերում բոլոր այդ առթիւ բողոքների հետ։

Այժմ անցնենք գիւղական միւս ցեցերին։

III

ՍՈՒԴԵԱ.

Մեր նախորդ տիպական նկարագրութեան մէջ, որքան գիւղական գլաւինը ներկայացաւ որպէս մի

բռնաղբօս ինքնակալ և անսահման իրաւատէր, այնքան «սելսկիյ սուդիան» կամ գիւղական դատաւորն, իրականութեան մէջ, ներկայանում է՝ որպէս մի անարդար օրինական և կեղծ ու խարդախ պաշտօնեայ։

Ղազախ գաւառի որ գիւղը մտնէք՝ բացի մի քանի շանագրգռւած մարդկանցից, ժողովրդի մեծագոյն մասը, մեծից մինչև փոքրը, սուդեաների ձեռքից «եամանդադ» են կանչում և այդ անօրէն ու անհոգի անհատներից շտապում են «եախա թափել»։ Այդ անհատները գիւղական համայնքների անկուշտ ու անյագ ցեցերն են, որոնք «տարէն տասներկու ամիս» շարունակ ծծում ու քամում են խեղճ շինականների արիւնքրտինքը։

Ղազախեցու առածն ասում է «գիլի» անուն ա կոտրած, աղէսն երկիր քանդեց»։ Ճիշտ է, գլաւինը գիւղերում ներկայանում է՝ որպէս մի գիշատիչ ու ամենակեր գազան, բայց սուդիաները նրանից ոչ միայն պակաս չեն իրանց յափշտակութեամբ, այլև իրանց խարդախ ու խաբեբայ գործունէութեամբ ամբողջ գիւղը «տակն ու վրայ» են արել ու անճար «քեասիբի ճրագը հանգցրել»։ Պերճախօս փաստերը իրականութեան մէջ աւելի վառ գոյներով են նկարագրում այդ «ցեց ու ուտիճ» վոհմակների պատկերն և այդ փաստերը անվերջ են ու անհամար։ Դրանք բոլորը հանդէս են գալիս շեշտելու, որ սուդիան կամ դատաւորը՝ մէկ-մէկ արտօնեալ իրաւատէր են և ոչնչով յետ չեն մնում նոյն իսկ քաղաքների ու մայրաքաղաքների օրինական շրջանների անհատներից և վարձական հաստատութիւնների պաշտօնեաներից։ Սակայն մի տարբերութիւն. որքան վերջիններն ամեն տեսակ զեղծում կատարում են նոյնիսկ իրանց կրթւած ու լուսաւոր գիտակցութեամբ, այնքան առաջիններն, այն է գիւղական սուդիաները, կատարում են միայնդամայն տգիտութեամբ

ու շահագրգռված։ Եւ այսպիսիների վարմունքը՝ ի գիմաց խեղճ ու աղքատ գիւղացիների, աւելի քան դատապարտելի ու մահացու է։

Սուղեա կամ դատաւոր բառն՝ ինքնըստինքեան նշանակում է մի այնպիսի կոչում կամ պաշտօն, որին ենթակայ եղողն, անպայման պէտք է լինի օրինագէտ, լայն աշխարհայացքների տէր, խիղճ և մարդկային ուրիշ յատկութիւններ ունեցող մի անհատ։ Սակայն, որքան քաղաքակրթուած երկիրներում այդ պաշտօնեաները՝ մասամբ իւիք համապատասխան են լինում իրանց կոչմանն, այնքան մեր կողմերում, առանց բացառութեան, բոլոր գիւղերի այդ օրինակ պաշտօնեաները միայնդամայն անհամապատասխան են իրանց կատարած դերին՝ իբրև օրինագիտութիւնից զուրկ, տգէտ, սահմանափակ հեռատեսութեամբ և անխիղճ ու անհոգի մարդիկ։

Այդպիսիները հետեւեալ առաւելութեամբ են ընտրւում. ժողովրդական առածն ասում է՝ «կոնդերի մէջ մինը չորեքթաթ գնաց, անումը դրին փահլեան» և երբ տգիտութեան և խաւարի մէջ խարխափողների շրջանում՝ մէկը նկատւում է, որպէս եղածներից «աչքարաց», այս կամ այն ինչ գործի մասին «գլխի ընգնող», իսկոյն նրա մասին դրական կարծիք է կազմւում թէ՝ «հէնց էն ա, նա ա որ կայ, և որ դրանից սաւայի ոչ ոք չէ կարող սուդիութիւն անիլ»...

Յաճախ այդ «իսկը սուդիացու»-ներն՝ ընտրւում են այն մարդիկ, որոնք բան ու գործ թողած, օրը մթնացնում ու լուսացնում են սելսկի ուպրաւլէնեաների դռներին։ Նրանք ինչ ու ինչ յատին մտքերով՝ օր ու գիշեր քաշ են գալի այդ հաստատութիւնների շուրջը, որպէսզի մի օր էլ «ունդատն ընգնի» ու իրանք դառնան գեղի կառավարիչներից մէկը։ Եւ վերջ ի վերջոյ՝ այդթէս էլ լինում է. ճիշտ որ, «թոկից փախածները» անցնում են գիւղի գլուխ ու այնուհետև աչքդ բարին տեսնի... Անցեալ, երազած ցանկութիւնները՝ այսօր փոխւել են իրականութեան, նրանք այնքան շտապում, այնքան «ոտին տոտին» են անում, որ կարճ ժամանակամիջոցում «իրանց դրստում» և քէֆները չաղացնում են։ Մէկ էլ տեսնում ես՝ երեկւայ սովածութիւնից «պատի ծէփ» դարձրած աղքատ Զատին, այսօր ընկնելով «քեօխվա-քէդխուդէքի» շրջանը, դարձել է «սուղեա Խաչատուր»։ Նրա «գետնափոր» խրճիթը հիմքից նորոգւել և փոխարինել է «քարաշէն քօշկի»։ Բաղն ու բաղչէն, լծկանն ու կթանը, սարն ու դաշտը միմեանց յետևից կանոնաւորւել են։ Եւ այդ բոլոր հարստութիւնը նա ձեռք և բերել կարճ ժամանակամիջոցում։ Այնուհետև, այլ ևս նրա «վէջէն չի» թէ իրան կեղծիքների մէջ կըրոնեն ու «պէը կըխուզեն»։

Ամենքին յայտնի է, որ գիւղի պաշտօնեաներն ուտող են և ով «ոսկրն է տալիս» նրա կողմն են։ Նրանց բոլորի վճիռներն ու կատարած գործերն՝ ոչ միայն ճշմարտութիւն ու օրինականութիւն չեն պարունակում իրանց մէջ, այլ և շատ անգամ լինում են սուտ և հընարովի, որպէս զի ձեռքները «շահի-բիստի» ընկնի։ Եւ այս բոլորի ընթացքում՝ միշտ տուժում է աղքատ ու անօգնական շինականը, քեասիբ ու թշուառ աշխատաւորը. և իզուր չէ, որ իրանք իրանց պէսների համար ասում են. «դառը դատում, մաղրուն նստում ենք»։ Բայց սուդիա Զատնի խիղճը արդար ու հանգիստ է՝ դեռ այդ տեսակ աւազակութիւնից յետոյ էլ։

Ղաղախում ինչն է շատ՝ «գեղերանքի ղալմաղալը»։ Կիրակի, «հուբմի» և անձրևախափան օրերին գրեթէ հանգիստ չկայ գիւղերում։ Մէկ էլ կըտեսնես սուդիաները նստել են մի չափարի սակ կամ մի կալամէջ և կամ մի փէյնակիտուկի ղրաղը և «իղնախը»

գլխներին հաւաքած, դատում են այս ու այն ինչ յանցաւորին. Մէկն ասել, վերջացրել է ու, որովհետև «վաղուց տեսել է սուդիէքին», հանգիստ սրտով յետ է քաշւում, յուսալով, որ գործը տարել է։ Առաջ է գալիս մեղադրուածը և հալ ու հարաքաթից ընկած ողորմելի ձայնով խնդրում է.

—Գլխիդ մատաղ, սուդիա Մկրտի՛չ, ասենք «մանա դիլի եօխ, բա՞ սանա դինի եօ՞խ»։ Աշխարհս գիդայ, որ 15 տարուց էվէլ ա՝ մեր ճալու լօբուտատեղը իմնա, հմի ախր դու Սողոմի խօսքով՝ ո՞նց ես ուզում իմ պապական տեղը ձեռիցս խլել։

—էդ քու բանը չի, ես ի՞նչ անում եմ օրինագրքով եմ անում։ Օրէնքը թիլ ա տալիս ու ես էլ վըճռում եմ, պատասխանում է դատաւորը։

—Արինս վե կածեմ ու թիլ չեմ տայ, որ էդ բանը գլուխ գայ, մրմնջալով հեռանում է աղքատը։

Ահա մէջ է մտնում Նախրչի Ղազօն. Նա վաղուց է, որ գեղամէջ է դուրս եկել ու փրփրակալած բերանով սրան ու նրան պատմում է իրան գլխին եկած օյինը։ Մի րոպէ նոյն իսկ չհամբերելով սկսում է.

—Ա՛ խալխ, ա՛ քրիստոնեա խալխ, էս ի՞նչ դուգուն դաղա, որ մեր սուդիէքը մեր գլխին են դնում։ Տօ՛, ես նզովեմ առաջ աղքատի օրը, ենիա հարստի հօր գեօռը։ Մկար հարուստը Աստօծ ա՞, որ նրա խօսքն անց ա կենում ամեն տեղ, ու մերը ո՞չ։

—Ա սուդիէք, էդ ի՞նչ իսպօլնտի լիստ էք տւել դարբնանց Ոսկանին, էդ ի՞նչ իրէք թուման ա, որ նա ինձանից դուսի ա տալի. ըլիւ չի՞ որ ասէք իմանամ։ Պարտքը ծածուկ կըլի՞, թէ աշկարա։

—Ղալմաղալ մի անի—ընդհատում է սուդիէն—թէ չէ բանդ գէշ կըլի։ Ոսկանը հօրիցդ սանաթ ունի, նրանից երեք թաղար ցորեն ա փոխ կալել, ու դեռ

հըլա տւել չի։ Շահի փոխարէն ծառայութին ա արել, համա գլուխը դեռ հըլա կենում ա տեղը։

—Ա՛ ձեզ մատաղ՝ հէրըս գերեզմանումը փող ա դառել, հըլա պրծիլ չի սրանց ձեռիցը։ Ա՛ խալխ, հէրս չէ՞ր որ 15 տարի նօքարութին արաւ Ոսկանին, ու վերջն էլ՝ մեր մի թայի եզը նրան տւեց ու պարտքից անջաղ դուրս եկա՞ւ։

—Շատ մի խօսալ, վճիռը վճիռ ա, ռազի չե՞ս, կօպիա վեկալ ու Գանջա ղարգի...

Նախրչի Ղազօն սրտի ցաւից ընկնում է գետին և ուշաթափւում, բայց բոլորն անտարբեր են մնում դէպի նա։

Ղազախում «վօլօսնօէ ուպրավլէնիէ» մտնելուց առաջ՝ ամեն մի գիւղ ունէր երեք սուդիա՝ մէկը միւսից տգէտ ու անգրագէտ։

Այսօր այդ վարչական կառավարութեան օրէնքով՝ իւրաքանչիւր գիւղ ունի մի-մի դատաւոր, որոնք տեսանի օրերին անպայման պէտք է գտնւեն կանցելեարում և այնտեղ վճիռ կայացնեն։ Նրանց տւած է իրաւունքի և օրէնքի մատեաններ, սակայն նրանք մնում են միանգամայն անձեռնմխելի՝ նոյնիսկ տասնեակ՝ տարիներով։ Բայց, ո՞վ է ինչ հասկանում, որ կարդայ և կատարէ։

Գեղական դատաւորները՝ բոլոր գործերը վարում են հին-նախնական սովորութեամբ։ Աւանդաբար մէկը միւսից լսելով և դրա վրայ էլ աւելացնելով իր շահասիրական միտումները, գործը վճռում է ըստ իր քմահաճոյքի։ Տեղական բարձր կառավարութեան բոլոր պաշտօնեաներն՝ ոստիկանապետը, գաւառապետն ու միրավոյ պասրեդնիկը նոյնիսկ, ամեն բան գիտեն, բայց ո՞ւմ հոգն է գլուխ ցաւեցնել...

Սելսկիյ սուդիաներն իրաւունք ունեն քրէական գործերում մինչև 30 րուբլու արժողութիւն ունեցող գործեր վճռելու և տուգանքի ենթարկելու մինչև 70

ռուբլու, իսկ քաղաքացիական գործերի ժամանակ՝ նոքա իրաւունք ունեն 100 ռուբլուց աւելի գործեր ու տուգանքներ վճռելու։

«Գիւղական ցեցերի» ասպարիզում մի փառաւոր տեղ ևս ունեն գեղական սրորշչիկներն, որ տեղական լեզուով կոչւում են «Թովչիքարներ» և սելսկի պիսարներն, որ կոչւում են՝ «Եազըչիներ»

Այդ բոլորի մասին յաջորդ գլխում։

IV

ՍԲՈՐՇՉԻԿ

Գաւառներում թէ առհասարակ ամեն տեղ, երբ կեղեքիչ վաշխառուն, հարուստ կալւածատէրը, խարդախ կապալառուն, խաբեբայ առևտրականը, անխիղճ պարտքանտէրն և սրանց նման շատերն իրանց գործերում հանդէս են գալիս՝ որպէս ժողովրդի հարստահարողներ, այդ դեռ որոշ չափով հասկանալի է՝ նրանք ինչ ու ինչ կապերով յարաբերութիւն ունեն ժողովրդի հետ։ Կամ երբ գիւղական «ցեցերի» շրջանում՝ կաշառակեր գլուխն ու անկուշտ սուդեաներն աչքի են ընկնում իրանց անսահման կեղծիքներով և անվերջ խարդախութեամբ, նոյնպէս պարզ է՝ նրանք իրանց պաշտօնակիցներից աւանդաբար ժառանգել են այդ բոլոր էական յատկութիւններն և ամեն տեսակ «կեղտոտ գործ» կատարելուց յետոյ, դարձեալ որպէս կառավարչական պաշտօնեաներ գրեթէ միշտ յանցանքից ազատ են մնում։

Սակայն ինչ անուն տանք այն անկոչ անհատներին, որոնք շատ անգամ առանց ընտրելու, մտնում են գիւղական ներքին գործերի մէջ և իրանց ձեռքն առնելով ամբողջ գիւղի հարկահանութեան, ել և մտից գումարների հաշիւներն և ինքնակամ, ինքնագլուխ ու

ինքնայօժար կերպով զանազան կարգադրութիւններ են անում՝ յօգուտ առաւելապէս իրանց գրպանների։ Այդպիսիներն են սելսկիյ սրբոշչիկները, որոնք ինչպէս ասացինք, կոչւում են «Թովչիքարներ»։ Նրանք բոլորը, ինչպէս շարունակաբար կը պարզենք, նման են այն գիշատիչ անգղներին, որոնք հաւաքելով անօգնական և վիրաւոր ընկած անասունի վրայ՝ կտցահարելով, ծեատելով և գզելով սպանում են նրան և այնուհետև հանգիստ սրտով սկսում են աջից-ձախից յօշոտել նրա գիակն և լափել ու մաքրազարդել նրան։

Ղազախ գաւառի գիւղացիք, «էն գլխից» սկսած մինչև այսօր, չեն կարողանում «աչքաբացել», ոչ թէ առաւելապէս գիւղական նիստ ու կացին վերաբերեալ զանազան յարմարութիւններ չունենալու պատճառով, ոչ, այլ նրանց օրը սև է, «եախի թելը կտրած», «հալ ու հարաքաթից» ընկած, «աչքի լիսը» խաւարած և չոր ու ցամաք ապրուստի մէջ՝ գլխաւորապէս այդ Թովչիքարների անօրէն ու անխիղճ կարգադրութիւնների պատճառով։

Արքունի հարկը՝ որքան էլ ծանր լինի, որքան էլ մեծ, այնուամենայնիւ ղազախեցին իր անդուլ աշխատասիրութեամբ կարող է ժամանակին վճարել։ Բայց, տարաբաղտաբար նա ոչ թէ ոանահար է եղած այդ պարտականութիւնից, այլ երբ լսում է «կօռ ու բեգառի» և «գէթմիշ»-ի ձայնը՝ նա «մահը տալիս է», որովհետև իրան քաջ յայտնի է, թէ ինչ տեսակ յաւելումներ ու այլևայլ չեղած ու չկատարուած ծախսեր են բարդուելու յիշեալ պահանջների վրայ։ Եւ այդ բոլորը Թովչիքարների ցանկութեամբ։

Ենթադրենք մի գիւղի վրայ տարեկան նշանակուած է պետական հարկ 2000 ռուբլի։ Այդ գումարից՝ գիւղացու մի տան վրայ իր կարողութեան համաձայն—

հարժական և անշարժ ստացուածքի չափով—ընկնում է 5 ռուբլի։ Նա՝ ամենայն բաւականութեամբ և հեշտութեամբ, տարեկան 10 ռուբլի կը վճարէ, միայն թէ «եախէն թափած» լինի «գիւղամիջից»։ Բայց, բանը դրանով չէ վերջանում. երբ թովջիքարների ձեռքի տակովն է անցնում այդ «հարկերի ու գէթմիշ»-ների բաշխումը, յանկարծ այդ 5 ռուբլու փոխարէն, նոյն տան վրայ նշանակւում է տարեկան մօտ քսան ռուբլի, ուրիշ խօսքով՝ պետական հարկից զատ 15 ռուբլի ևս այդ տունը անպայման պարտաւոր է յատուցանել, որպէս գիւղի վրայ գործադրւած այլ և այլ ծախսեր, որոնց անւանում են ընդհանուր բառով՝ «գէթմիշ»—ելք։

Տեսնենք թէ ի՞նչից է գոյանում այդ գէթմիշը։

Գէթմիշի մէջ են մտնում՝ առաջին—«Սարալախ» կոչւած տուրքը։ Սա այն արօտատեղիների վարձն է՝ ուր «եայլաղ» գնացած ժամանակ, արածում են գիւղացոց անասուններն՝ եզ, կով, գոմէշ, ձի, ոչխար և այլն։ Սարալախի տուրքը բաժանւում է միմիայն այն տների վրայ, որոնց չորքոտանի անասուններն օգտւում են այդ տափերից։ Այս բաշխումի ժամանակ՝ շատ յաճախ պատահում են հետևեալ ապօրինութիւնները. Դիցուք 5—6 տարի առաջ, հաշւել ու ցուցակագրել են գիւղացոց չորքոտանիներն և ըստ այնմ՝ այդ տարին մի գիւղացու ունեցած երկու լուծ եզի ու վեց կովի համար նշանակել են համապատասխան տուրք։ Անցնում են տարիներ, կամ գողացւում են նրա եզներից ու կովերից մի քանիսը և կամ սատակում են։ Յաջորդ տարիներին, դարձեալ նախկին ցուցակագրածի համաձայն, թովջիքարները ծախս են հաշւում այն գիւղացու վրայ։ Տէրը՝ գալիս, աղաչում, պաղատում է, վկաներ է բերում, որ այժմ այսքան ապրանք ունի և այսքան պէտք է տայ և որ իրանք թովջիքարներն այդ բանը շատ լաւ գիտեն,

բայց ոչ մի հնարք չի լինում ծախսը կրճատելու։ Ընդանք բացէ ի բաց մերժում են առարկելով, թէ՝ «չկել նոր համբարքը՝ մենք կարալ չենք քու ունեցածը պակասցնել, չունքի խաղնին այդան ա քու ապրանքի համբարքը և էն ու գեօրայ էլ փող պտես տայ»։ Այսպիսի դէպքեր յաճախ են պատահում և այդ բոլորից գոյացած փողը մտնում է թովջիքարների և միւս պաշտօնեաների գրպանը։

Պատահում է և այսպէս՝ ցուցակագրութիւնից յետոյ մէկի անասունները կրկնապատկւել են և ըստ օրինի պէտք է նրա տւած տուրքը համապատասխան լինի իր անասունների թւին։ Սակայն, թովջիքարները՝ կանխապէս շահւելով այդօրինակ անհատներից՝ «թովջի»-ի ժամանակ, աչքաթող են անում այդ հանգամանքն և չգիտութեան տալով, այդ գիւղացու վրայ հաշւում են այնքան գլուխ ապրանք, որքան նա ունեցել է ցուցակագրութեան ժամանակ։ Եւ այդ կողմնակի օգուտը դարձեալ մնում է իրանց մէջ և հաւասար բաժանւում։

Գէթմիշի մէջ են հաշւում երրորդ՝ «Մասրաֆ» կոչւող զանազան պատահական ծախսերը։ Տարւայ ընթացքում գաւառական և՝ այլ և այլ վարչական հաստատութիւններից՝ ինչ ու ինչ գործերի համար գիւղերն են գալիս դիցուք՝ պրիստաւ, եասաուլ, քննիչ, աքցիզ, միրաւոյ պասրեղնիկ և այլն։ Սրանց մի կամ կէս օրւայ գեւղում մնալու դէպքում, գիւղի կողմից նրանց նախաճաշի, ճաշի, կամ ընթրիքին կամ նոցա ձիանների տւած խոտ, դարման ու գարիի համար արած ծախսերը՝ տարւայ գլխին այնքան «ծնում» և ծաւալւում են, որ յանկարծ պետական հարկից շատ աւելի խոշորանում են և գիւղացոց գլխին դառնում են «դարդ ու բալա»։ Պակաս ծախսեր չեն ցոյց տալիս՝ գիւղից զանազան տեղ գնացած գիւղի պաշտօնեաներն՝ իրանց

վերադարձին։ Եթէ մարդագլուխ ծախսել են 5-ական ռուբլի, ամենայն խղճմտանքով նրանք հաշուում են 10-ական, ասելով, «մենք խու խալխի նոքարը չենք որ համ գործ բիթմիշ անենք, համ էլ մեր ջրիցը ուտենք»։

Գէթմիշ են համարուում երրորդ՝ «Ջառըմա» կոչուած անակնկալ ծախսերը։ Դիցուք մի գիւղի սահմաններում կորել են միւս գիւղացու չորքոտանիներն. օրէնքով պարտաւորուում է այդ անասունների գինը վճարել այն գիւղի հասարակութիւնը՝ դէպի ուր գնում և հասնում է կորուստի հետքը։ Այսպիսի դէպքերը թովջիքարների համար՝ համարուում է «ջուխտ ոտով» թաղուել. և իրաւ, նոցա բախտը բանում է՝ երբ անթիւ պատճառներ են ասպարէզ գալի և յանկէ յանուանէ պահանջում են «թովջի»-ի—հաշուի—ժամանակ կանոնաւոր յատուցում։ Ասում ենք, գիւղացու տունը քանդում են ահա այդօրինակ ծախսերն ու տուրքերն, որոնք եթէ նշանակուէին իսկական քանակութեամբ, դարձեալ մի կերպ տանելի կլինէին, բայց երբ նշանակած են գրեթէ երբակի յաւելմամբ, այն ժամանակ արդէն՝ ինչպէս ասում են՝ «բանը բանից անցնում է»։

Չորրորդ, գէթմիշ են նշանակում նաև՝ գիւղական պաշտօնեաների ռոճիկները, գլաւինի, պիսերների և այլն։ Նոյնպէս գէթմիշ է՝ Գանձակի արհեստաւորաց դպրոցի տուրքը։ Այդ շէնքի հաստատութիւնից յետոյ, երկար տարիներ է, որ այդ նահանգի գաւառներում եղած բոլոր գիւղերը պարտաւորուում են տարեկան որոշ տուրք տալ և տալիս են անխափան։ Գէթմիշ է և գիւղերի սեփական ուսուցիչների (եթէ միայն կայ)..., ծախսերը, որոնք բաժանուում են դարձեալ ծխական տների վրայ։ Մի խօսքով, չափազանցութիւն չլինի, եթէ ասենք թէ տարուայ իւրաքանչիւր օրուայ թեւով՝ նոր ու նոր գէթմիշներ են բարդում գիւղերի վզին

մեր անհոգի թովջիքարներն՝ ի հարկէ այդ բոլորը որոշ նպատակով։

Օրէնքով այդ հաշուառեսները պէտք է ընտրուեն գիւղի հասարակութեան կողմից, բայց որովհետև գիւղացիների մեծամասնութիւնն անգրագէտ է, հաշիւներից «խամ», գրեթէ միշտ մնում են միևնոյն մարդիկ, որոնք անկոչ մտել են այդ գործերի մէջ և անվերջ էլ կառավարում են իրանց քմահաճոյքով։ Դրանք են «քեօխվա-քէդխուդաների» «համդաշ» մարդիկ, որոնք օրնիբուն ձեռքները «դօինջ» արած, պտտում են գիւղամիջում և սրա ու նրա հարսի անունը տալով՝ քէֆ անում... Եւ դրանց քէֆը՝ աղքատ գիւղացու, էն դառն աշխատաւորի արիւնքրտինքն է, որ դրանք այնքան «հալալ» անուշ են անում։ Ի զուր չէ ասած թէ. «էշը դաղի ձին ուտի»։ Եւ «հազիր հաղրաբաշ» գումարներն իրանց ձեռքին՝ ինչպէս կամենում, այնպէս էլ վարուում են։ Ո՞վ կարող է նրանց ասի թէ՝ «առաջ ես՝ յետ նստի»։

Ընդունուած կարգի համաձայն՝ այդ թովջիքարները պէտք է թաղական ներկայացուցիչներ լինեն՝ որպէս իրանց շրջակայի հետ ծանօթներ։ Գիւղի որակութեան համաձայն էլ մեծանում ու փոքրանում է թովջիքարների թիւը։ Եւ իսկապէս, փոխանակ այդ մարդիկ ընտրելու, շատ դէպքերում ինքնակամ, քէօխւի կամ սուդիի միջնորդութեամբ, հանդէս են գալիս և միանգամ գործի մէջ մտնելուց յետոյ՝ ցմահ մնում են իրանց պաշտօնում։ Երբեմն նոր կազմերի ձեռքն է անցնում այդ թովջիքարութիւնը, բայց անդադար հանդիպելով դանդաղ խոչընդոտների և անլուծելի հաշիւների, մնում են խճճուած և կամա-ակամայ դարձեալ մէջ են հրաւիրուում առաջինները, այն ժամանակ՝ էլ ո՞վ կըդիմանայ նրանց։

Մեր կողմերում, թովջիի օրը՝ մի «Աստու անիծած» օր է լուսանում. կռիւ, ղալմաղալ, հայհոյանք,

ծեծն ու վիրաւորանքը միմեանց համախառնուած՝ աղմկում են գիւղն և ոտի կանգնեցնում գիւղի մեծին ու փոքրին։

—Ախր, խանաթ էք, ա ձեր տունը բրիշակ ըլի, էդ խի՞ էք քարհերեց անում ինձ, գոռում է Միսկարանց Գևոն. մի իշից սաւայի, դռներիս էլ չորս ոտանի չըկայ, ախր ընչի մհար էք էգքան էվել—էվել սարալախ քաշում։

—Տղէրք, մի լուծ եզս չէ՞ր, որ հեռու չէ, մէկել տարին գողացան և գեօրէգեօռ Սիմոն քեօխվէն քսան մանէթս կերաւ ու բան չըշինեց, էդ խի՞ էք կորստիցս էլ փող հաշում, մէջ է ընկնում փափախչի Աթին։

—Մկար Բէգլար ապնին յայդնի չի՞ իմ ունեցածը, բա ո՞նց էք ինձ ունեցողների հետ թայ անում, ես 18 մանէթ խարջ տուող ե՞մ, այ ձեր տունը քանդւի ո՛չ, ախր հաւը ջուր ա խմում, երգինք ա եշում, աղաչում է նոքար Ասլանը։

—Տօ, էս տարի, մեր գեղը երկու մարդ անջաղ ըլի էկած, էդ քանսի՞ անումն էք տալի ու ջխտաբերկնգայ զայդի մասրափը իրար հննա ծնեցնում, աղաղակում է գալլաք Ղուկասը։

Օրը մթնում է, անվերջ բողոքները մնում են անհետևանք, թօվլիքարները կատարում են իրանց գիտեցածը և միւս օրւանից սկսում են հարկերը հաւաքել։ Պէտք է յիշել նաև հետևեալ տխուր իրականութիւնը. դիցուք մի գիւղում 20—30 տուն բոլորովին աղքատ են և նրանք ցուցակագրւած չեն, որպէս ո՛չ խարջատուներ, բայց և այնպէս նրանք էլ չեն ազատ մնում տուրքերից։ Այլ և՝ միշտ, ամեն տարի, բացի սովորական յաւելումներից, տարեկան մօտ 1000 բուբլի էլ «գլուխ» են գնում և որոշեալ հարկերից զատ այդ գումարն էլ հաւաքում են դարձեալ իրենց օգտին։

Ղազախում այդ հարկերը վճարւում են երկու տրէտ՝ առաջինը մարտ ամսին. երկրորդը սեպտեմբերին։

Հարկահանութեան դէպքում, պարոն թօվլիքարներն աչքից բաց են թողնում իրանց այն համագիւղացիներին, որոնք ինչ ու ինչ հանգամանքներից ստիպւած՝ թողել են գիւղը և այս ու այն քաղաքներում զբաղւած են որ և է գործով։ Անմիջապէս մարդիկ են ուղարկւում և նրանցից էլ որոշ գումարներ առնւում։

Այսպէս ահա, անտէր ու անտիրական գիւղերում, նոյն իսկ յետին պաշտօնեան՝ իրաւատէր է, ժողովրդի սեփականութեան թշնամին, նրա ջանի «տզրուկը»։ Ի՞նչ խօսք, որ առաջնակարգ պաշտօնեաները՝ ազնւականների ու իշխանների յարգանք ու կոչում կունենային։

Այժմ մենք անցնենք սելսկի պիսերներին, կամ ինչպէս նոքա տեղական խօսքով կոչւում են, «եազըչներ»-ին։

V

ՊԻՍԵՐ

Գիւղերի վարչական պաշտօնեաների շրջանում, իրանց բացառական գործունէութեամբ, պակաս դեր չեն խաղում գիւղական գրագիրները։ Վերջին տարիներում, երբ Ղազախ գաւառում հաստատւեց վօլօստնօյ կոչւող կառավարչական կենդրոնացման սիստեմն, այն օրից այդ պաշտօնը-գրագրութիւնը—աւելի բարդւեց և աւելի «խարջ ու բօրջի» մէջ ձգեց գիւղացիներին։

Ներկայումս, այդ պաշտօնը վարելու համար, բացի գիւղերի սովորական գրագիրներից, որոնք տեղական լեզուով կոչւում են «եազըչիներ», կան նաև «սել-

սկի պիսեր»-ներ։ Սրանք ծառայում են սելսկիյ ուպ-
բաւլենիում և կատարում են զուտ կանցելեարիական
գործեր, թարգմանի դեր, այլ և՝ օգտուելով գիւղական
միւս պաշտօնեաների տգիտութիւնից, մտնում են նը-
րանց իրաւունքների մէջ և գործերին կամայական ուղ-
ղութիւն տալիս։

Պաշտօնական գործերին օրինական ընթացք տը-
ւողը սրանք են, և ըստ իրանց վաղեմի սովորութեան
մինչև սրանից ու նրանից կաշառք ու նուէր չստանան
երբէք ոչ մի գործ առաջ չեն տանի։ Նոյն իսկ ամենա-
անհրաժեշտ գործերն՝ ամիսներով արխիւներում մնում
են անկատար և ուղղակի, կամ անուղղակի կերպով
հասկացնում են գործատէրերին, որ եթէ նրանք հար-
կաւոր «ջափէն» քաշեն՝ և՝ գործը շուտ կըլինի և՝ յե-
զուտ իրանց կըկարգադրի։ Այսպիսի միջնորդութեան
համար՝ գլուխ են պատռում և՝ գլուխները և՝ սուդիա-
ները. որպէս զի մի կերպ պիսերի սիրտը շահեն ու
իրանց զեղծումները ծածկուած մնան։ Նոքա ամենայն
բաւականութեամբ կատարում են պիսերների նաև ա-
մենայետին ցանկութիւնները, մանաւանդ այն ժամա-
նակ, երբ սրանք այլազգի են և օտարական։ Եւ այդ
դէպքում նրանց—պիսէրների—այդ վարմունքը հաս-
նում է ուղղակի անբարոյականութեան...

Կանցելեարական գործերի «ունք ու բունքի», լաւ
ու վատի և առհասարակ ամեն տեսակ գաղտնիքների
հետ ծանօթ այդ պիսերները՝ իրանց ձեռքի մէջ ունե-
նալով որոշեալ գիւղերի բոլոր գրավարութեան դեկը,
շատ պարզ է, որ ամենայն տեսակ իրաւունք էլ կը
գործադրեն և նրանց խօսքն էլ կանցնի. որովհետև եթէ
նոյն իսկ նրանց տուած տեղեկութիւնները գլխովին
սուտ լինի, կամ յեղաշրջուած կեղծիք՝ դարձեալ կընտ-
րինեն ամենայն վստահութեամբ, իմանալով հանդերձ,

որ այդ բանով հետաքրքրուող չկայ՝ ոչ բարձր և ոչ էլ
ցածր ատեաններում։

Հարիւրաւոր գործեր անցել ու գնացել են, որոնք
ամփոփել են իրանց մէջ հիմնովին կեղծիքներ, և որով-
հետև դրանք դուրս են եկել խարդախ ձեռքից, կաշառքի
ուժով անհետացել են անդարձ։

Արդարութիւնն ու ճշմարտութիւնը չէ, որ գոր-
ծադրւում է այդ և այդօրինակ հաստատութիւնների ու
պաշտօնեաների շրջանում, այլ՝ կեղծիքն ու ստու-
թիւնն և խարդախն ու խաբէութիւնն։ Երանի թէ
գործադրէին պետական օրէնքները, գուցէ մասամբ
իւրք գոհացուցիչ լինէին դրանք, սակայն ինչ օրէնք,
ինչ իրաւունք, երբ բարձրից սկսած մինչև ստոր ա-
տեանները, մեծից սկսած մինչև գիւղի յետին պաշ-
տօնեան, օրինակ գէրը, գրագիրը բոլորը կամայական
են, եսամոլ, ինքնուրոյն և հրամայող։ Ահա այս վիճա-
կի մէջ հարստահարւում են ամենքն՝ ամեն տեղ, մա-
նաւանդ տգէտ գիւղացիք, որոնց արդարութիւնը, միա-
մտութիւնն և հաւատը շատերի համար դարձել է
ձեռնտու միջոց՝ իրանց յետին ցանկութիւնները յա-
ջողութեամբ պսակելու։

Վարչական հաստատութիւնների այդ օրինակ
կանցելեարիստներն ու չինովնիկները՝ ծառայում են ոչ
թէ ստանալիք ռոճիկներից հրապուրուած, այլ այն բո-
լոր տուգանքների, կաշառքների և փէշքաշների ախոր-
ժակով, որոնցով հարստացել ու յղրացել են իրանց
նախորդները։ Դրանց նմաններից մէկն է և գիւղի
գրագիրը։ Նա բացի այն, որ տարեկան իր ռոճիկն է
ստանում, այլ և կատարեալ իշխանի կեանք է անցկաց-
նում, ուտում է ձրի, խմում է ձրի, անվերջ քէֆերի
մէջ է ձրի և անթիւ կաշառքներ է ստանում ձրի, ա-
հա գիւղի գրագրի, կանցելեարիստ գրագրի, վիճակը։

Սրանց համար է, որ ասում են թէ՝ «գրչով գրում են, բրչով ջնջում, աջով շինում են, ձախով քանդում»։ Եւ իզուր չէ ասած. օրհնուած սուր դանակի ծայրը՝ այնքան քնքշութեամբ գործ է կատարում նրանց փորձուած աջ ձեռքի մէջ, որ դիտաւորեալ խուզարկութիւններն անգամ կը դժուարանան եղելութիւնը հաստատել։ Ամեն տեսակ գործ, ինչ մտքով էլ որ ուզարկուած լինեն դէպի գիւղեր, նոյն իսկ եթէ իրանց մէջ պարունակում լինեն կարևոր հարկաւորութիւն, խիստ լրջութիւն, որի առաջ պատասխանատու են հէնց իրանք գիւղական պաշտօնեաները, դարձեալ նրանց հնթարկում են զանազան ուղղումների, եթէ այդ բանի համար նրանց ձեռքն է ընկնում մի կլոր գումար։

Եւ այդ ճանապարհով քանի մարդասպան է ազատուել բանտերից, ինչքան գողեր են մարսել իրանց յափշտակութիւնը, որքան արդար ձայն է խլացել, քանի աղքատ ու անօգնական շինականներ են ոտքի տակ կորել ու լռութեամբ դատապարտուել։

Գիւղական պիսերների այդօրինակ պաշտօնավարութիւնը՝ յայտնի է իրանցից բարձր պաշտօնեաներին, սակայն, որովհետև առաջինները միշտ հաճոյական, ստորաքարշ և կեղծաւոր բնաւորութեամբ հպատակութիւն են ցոյց տալիս այդ բարձր պաշտօնեաներին, օրինակ՝ ոստիկանապետներին և ուրիշներին, ուստի միշտ մնում են իրանց տեղն և շատ անգամ նոյն իսկ աւելի բարձր պաշտօնի արժանանում։

Բացի այդ կանցելերարիստ գրագիրներից, իւրաքանչիւր գիւղ ունի իր սեփական «եաղջիները», որոնք հազիւ հայերէն գրել-կարդալ են իմանում։ Սրանք գիւղական թօվլիքարների աջ ձեռն են։ Գիւղի վերաբերեալ յատուկ «խարջ ու բօրջի» կարգադրութիւնները կատարում են առաւելապէս սոցա նախաձեռնութեամբ, որպէս գրի «սև ու սպիտակը» իմացող մարդկանց։ Եւ ահա ամեն օր, մանաւանդ գիւղական ատեանի օրերին, սրանք աչքի են ընկնում ամեն տեղ։ Ձեր առաջ կանգնած է խարդախ հայացքներով մի փափախաւոր, կռան տակն ունի մի հին, «ընջոտած դաւթար», ձեռքին ջարդած մի համրիչ, գոտիկից կախած է թանաքաման, գրչակոթն էլ խրած ունի «չուխի» մասրէքից մէկի մէջ և այդպէս՝ սրա ու նրա տանը մօտենալով՝ խրոխտ ձայնով դուրս է կանչում տանտիրոջն այս ինչ ու այն ինչ խարջն ու զեթմիշը վճարելու։ Դրանք փողը ստանալուն պէս, գիւղացուն գոհացում տալու դիտաւորութեամբ՝ որպէս թէ ստացական են տալիս, սակայն Աստուած ստացական համարի՝ ոչ փողի քանակն է երևում, ոչ վճարողի ազգ ու անունը, ոչ ժամանակն ու թիւը և ոչ ստացողի ստորագրութիւնը։ Շատ անգամ ստացականի փոխարէն տալիս են բոլորովին մի այլ գրութիւն, ի հարկէ յետին մտքով։

Եաղջիի քաջ գործունէութիւնը թագ ու պսակ է կազմում գիւղի քեօխվա-քէդխուդաների և թօվլիքարների շրջանում, և այդ սահոգի գրողը՝ իւրաքանչիւր մարդու վրայ թողնում է սև-գրողի տպաւորութիւն։

VI

ԶԻՆՈՎՆԻԿՆԵՐ

Գիւղերի անմիջական կառավարիչ պաշտօնեաներից (գլաւին, սուդէա, սրօրշչիկ, գրագիր...) յետոյ՝ ասպարէզ են գալիս այսպէս ասած՝ «չինովնիկ», կամ բարձր պաշտօնեաները այն է՝ պօլիցիականները։

Հարստահարած գիւղացիութիւնը, հալալ աշխատանքի արդար մշակ գիւղացիութիւնը, թէ ինչ օր է

տեսնում այդ շրջանում՝ Աստուած ինքն ազատէ։ Տեղական ցեցերից «արնաքամ եղած» անմեղ յանցաւորը, քրտնաթոր աշխատանքից ուժասպառ եղած բանւոր մշակը, գիտակցութիւն քարոզող գաղափարական գործիչը, մի խօսքով բոլորը՝ ով ընկնում է յիշեալ մարդկանց ձեռքը՝ նոյն իսկ ամենահասարակ գործով, եթէ փրկանք չէ տալիս՝ ենթարկւում է ծեծի, տանջանքների, կապանքների մինչև իսկ բանտի։

Այդ մարդիք գիւղերն են մտնում ի պաշտօնէ քննելու և հսկելու տեղական պաշտօնեաների գործերը, լսելու ժողովրդի ձայնը, դժգոհների բողոքը, կարիք ունեցողների խնդիրը, սակայն «յօնքը շինելու տեղ աչքն են քոռացնում»—փոխանակ այդ ամենի, միանում են տեղական իշխանաւորների հետ և մատնացոյց արուած մարդուն «էն օրն» են ձգում, որ «բէհեսաբ» կանի նա ու էլ «մէյդան» չի դուրս գայ իր լաւ ու վատի մասին խօսելու և իր կարիքները պահանջելու։

Շատ հազիւ է պատահում, կամ աւելի ճիշտն ասած, երբէք չի պատահում մեր կողմերում, որ իսկական յանցանքագործը պատժւի և արդարն ազատւի։ «Նահախ» այդ դատապարտուածն՝ արդար մեղապարտը, երբ մանաւանդ նա չունևոր և քեասիբ է, և չէ կարողանում «մեծաւորներից» պահանջւած կաշառքն ու փրկանքը տալ՝ ենթարկւում է պատժի և ընդհակառակը նա՝ ով նոյն իսկ մի քանի անգամ «բռնւել» է և տեղացի մեծ ու փոքրի կողմից ճանաչւում է որպէս «դող, աւազակ, մարդասպան և հասարակութեան համար միանգամայն անպէտք և վնասակար անդամ», նա շնորհիւ «ինձ տուր, քեզ տամ»-ի շնորհիւ անյագ և աչքածակ պալիցիականների ձեռնարկած միջոցներին, մնում է ազատ, կամ շատ-շատ ենթարկւում է աշկարա տուգանքի և անյայտ, կամ ծածկաբար տալիքի մի

մասը՝ տալիս է յայտնապէս և ազատւում է մեղադրւած գործից։

Դժբախտութիւնը կայանում է մանաւանդ նրանում, որ Ղազախը շրջող այդ օրինակ բարձրաստիճան պաշտօնեաների մեծագոյն մասը լինում է օտարազգի։ Հարց ու պատասխանի ժամանակ՝ ոչ գիւղացին է կարողանում ազատ և ճիշտ բացատրել նրանց առաջ և ո՛չ նոյնիսկ նրանք կարողանում են գործի իսկական եղելութիւնն իմանալ։ Ամեն անգամ երկու կողմերի մտքերը միմիա́նց հաղորդելու համար՝ գործի մէջ է մտնում թարգմանն, որ տեղական լեզուով կոչւում է «դիլբանդ»։։ Եւ նայած թէ այդ միջնորդն որի կողմն է թեքւած, կամ որի առաջարկութեամբ և ինչ գործի պատճառով է ասպարէզ մտել «էն ու գորա» էլ նա իր թարգմանութիւնն է անում։ Այդպիսի դէպքերում թարգմանի դեր յաճախ կատարում են սելսկիյ պիսարները, որոնց վարք ու բարքի և ցոյց տւած արարմունքների հետ մենք ծանօթացրիք ընթերցողին, այնպէս որ ինքնըստինքեան պարզ ու հասկանալի է, թէ այդ թարգման-պիսարները ինչ ուղղութիւն կտան իրանց ստանձնած գործերին։

Առաջներում՝ այդ բարձրաստիճան չինովնիկների մէջ՝ մարդկութիւն, խղճի ձայն, ազնւութեան նշոյլ և արդարադատութեան մի փոքրիկ նմուշ անգամ չէր երևում և ոչ մի քայլում։ Սանձարձակ պաշտօնը միացած մարդկային ագահութեան հետ՝ գազան էր դարձրել և՛ ռուսին և՛ վրացուն, և՛ թուրքին, և՛ հային և հէնց բոլոր ազգութեան պատկանող այն անհատին, որը մտնում էր գաւառական ոստիկանական մի որևէ պաշտօնի մէջ։

Պոլիցիական պրիստաւներն, իրանց օգնականներով և ստորագրեալներով, «եասաուլ»-ներով և «վստղնիկ»-

ներով տասնեակ և հարիւրեակ գիւղերին այն աստիճան ճնշումի և երկիւղի մէջ են պահել, այնչափ ժամանակ-անժամանակ դատի և քննութեան են կանչել, որ «տեղից վեր կացող» ամեն մի շինական, այլ ևս առանց քաշելու և բացարձակապէս ճչում ու աղաղակում է թէ դրանք բոլորը ոչ թէ գեղերի երդւեալ օրինապահներն են ու կառավարիչներն, այլ երդւեալ օտարները։

Ստորադրեալ եասաուլներն ու վսաղնիկներն, երբ մտնում են մի որևիցէ գիւղ՝ ոչ միայն նիւթական ահագին ծնասների և ծախսերի տակ են ձգում բնակիչներին, այլ և շատ անգամ, բռնի ուժով, անվայելչութեան և հազար ու մի տեսակ տմարդի քայլեր են անում, որով արատաւորելով շինականի սուրբ օջախը՝ նրա անդամներին հոգեկան անկման են մատնում և նրա առաքինութիւնը քայքայում։

Հարբեցողութիւնը չինովնիկներից շատերի Աստուածն է։ Մանաւանդ ստորադրեալներից շատերը՝ օր ու գիշեր, գիւղից-գիւղ ընկած՝ ուտում, խմում, հարբում են և այդպիսով աւերում են մէկի և միւսի տունը և ապա կեղծ ու պատիր, սուտ ու սխալ կարգադրութիւններ ու որոշումներ, հրամաններ ու պարտականութիւններ անելով այսինչ մարդու, կամ գիւղի անունով, թողնում են ու հեռանում։

Չինովնիկների շրջանում՝ մեծ դեր են խաղում նաև լէնիչներն, օգնականներով ու օբէյչիկներով, և ակցիզներն, որոնց գործունէութեան հետ մանրամասնաբար պէտք է ծանօթանալ գիւղերում։

Եւ գիւղն ու գիւղացին՝ սկզբից ի վեր, կեղեքւած է վերոյիշեալ բոլոր ցեցերի ձեռքին անտէրութիւնից...

Այժմ անցնենք գիւղական ցեցերի միւս՝ ոչ պաշտօնական դասակարգին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0397720

ԻՄ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. «Մանկական Ալբոմ», փունջ առաջին. . . . 20 կ.
2. «Փանլեան աքաղաղը». . . . . 6 »
3. «Այծարած Ղազօն». . . . . 6 »
4. «Զալօի էշը», (սակաւաթիւ). . . . . . 3 »
5. «Գութանի մատաղը» . . . . 5 »
6. «Գիւղական ցեցեր», Ա. մաս. . . . . . . 10 »

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա. Բ.

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՋԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Բրդոտը.
2. Հունձ ու փունջ.
3. Պապիս ձին.
4. Ոտանաւորներ.
5. Գաղափարի հերոսը.
6. Երեքը մի գրոշ, պիէ
   2 գործ.
7. Բեմի քարոզիչը, (Թիֆլ
   հայ քաղ. կեանքից).
8. Արցունքի աղբիւր. (ստ.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Ծախւում է Թիֆլիսի և գաւառների բոլոր յայտ
նի գրավաճառների մօտ։